

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 7-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո» (Ղուկ. ԺԵ 18) բնաբանով քարոզ է խոսում Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Երևանի Ս. Սարգիս եկեղեցում ներկա է լինում ս. պատարագի արարողությանը և այս առթիվ «Հայր մեր»-ից առաջ քարոզում ավետարանական սիրո վեհության և անհրաժեշտության մասին մեր օրերում՝ միաժամանակ ընդգծելով Մեծի Պահոց խորհրդի հոգևոր-բարոյական նշանակությունը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին, որպես գավավանակիր, ուղեկցում էր Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

*
* *

Մարտի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 14-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺՁ 8) բնաբանով քարոզ է խոսում Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 21-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը:

*
* *

Մարտի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում դասախոսությամբ հանդես է գալիս Մատենադարանի գիտաշխատող Հակոբ Քյոսեյանը՝ ներկայացնելով Հովհան Մայրագոմեցու «Վերլուծութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ» աշխատությունը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանը ներկայացնում է Մարտին Լութերի կյանքը, գործունեությունը և նրա ապրած ժամանակաշրջանը:

*
* *

Մարտի 27-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, տոնի առիթով ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Ս. պատարագից հետո հոգևոր ճեմարանի ուսանողությունը, գլխավորությամբ ուսմասվար Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանի, ուխտի է մեկնում Ս. Խորվիրապի վանք:

*
* *

Նույն օրը, ժամը 13-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան տիար Արթուր Հարթմանը՝ իր տիկնոջ հետ:

Այս առթիվ Հայոց Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

*
* *

Մարտի 28-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Գալատեան).

Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովհաննես քհն. Շահնազարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի դուք յապատութիւն կոչեցեալ էք, եղբարք. միայն կի ապատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց» (Գաղ. Ե 13) բնաբանով քարոզ է խոսում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Մարտի 30-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում հյուրաբար Հայաստանում գտնվող՝ լիբանանա-սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը:

*
* *

Մարտի 31-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանը շարունակում և ավարտում է Մարտին Լութերի մասին իր զեկուցումը: